







ԼԱԻ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԵՇՐՋԱՆ ՄԸ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ, ԼԱԻ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՐԴԵԳՐԵՆՔ

- 1- Դասի պահուն կեդրոնանանք ուսուցիչի բացատրություններուն:
- 2- Տուն հասնելէ ետք, պատառ մը ուտենք: Ընտրենք սննդարար ուտելիքներ:
- 3- Լաւ սորվինք մեր դասերը եւ ուրախութեամբ կատարենք մեր պարտականութիւնները, որովհետեւ հաճոյքով կատարուած որեւէ բան լաւ արդիւնք կու տայ:
- 4- Դասերը պատրաստելու ընթացքին կը պատահի, որ օգտագործենք համակարգիչ կամ բջիջային, սակայն անոնք թող չշեղեն մեր ուշադրութիւնն ու կեդրոնացումը դասէն:
- 5- Ժամանակ դնենք դասի, խաղի կամ հանգիստի:
- 6- Կանուխ քնանանք: Օրուան ընթացքին, երբ կը սորվինք եւ կ'աշխատինք մեր մարմինը կը յոգնի: Քունը կ'օգնէ, որ մեր ուղեղն ու մեր մարմինը վերագտնեն իրենց ուժերը:

Բաւարար քունը աղիթ կու տայ, որ մեր մարմնի պաշտպանական համակարգերը (immune system) աշխուժօրէն գործեն, եւ առողջ մնան մեր սիրտն ու երակները: Քունը կ'օգնէ, որ մարմինը դէմ դնէ հիւանդութիւններուն եւ վերականգնի մեր առողջութիւնը: Երբ լաւ քնացած ենք, շատ աւելի ուշադիր ենք ու կեդրոնացած: Քունը անհրաժեշտ է մտքերն ու յիշողութիւնները կազմակերպելու եւ նոր տեղեկութիւններ դիւրութեամբ սորվելու համար:



Բոհ Եղցի եկեղեցիներէն մէկը դուրսէն դիտուած

Բոհ Եղցիի ճարտարապետներն են Շահէնն ու Խաչինէք Անեցի, որոնք իրենց անունները արձանագրած են եկեղեցիներու պատերուն վրայ:

**ՁՇահէն վարպետ այս եկեղեցու յիշեցէք ի Տէր Խաչինէք վարպետ Սուրբ եկեղեցու ի Քրիստոս աղօթքով յիշէք**

**Ես Խաչինէք Անեցիս վարպետ Սուրբ նշանիս, որդին Վարհամա, ով կարդայ թող աղօթքով յիշի ի Քրիստոս**

Եկեղեցին կառուցուած է Յովհաննէս եւ Ներսէս եղբայրներու եպիսկոպոսութեան ժամանակ:

ԲՈՒԻ ԵՂՑԻ ՎԱՆՔԸ

Արցախի Մարտունի շրջանի Հացի գիւղէն դէպի արեւելք՝ Անահիտի փոքր ձորի ձախ կողմը կը գտնուի Բոհ Եղցին (եկեղեցի): Իր տարածքով Արցախի ամէնէն ընդարձակ վանքն է: Հոն Միջնադարեան յուշարձաններ տարածուած են բլուրի ստորոտէն մինչեւ գագաթը: 12-13-րդ դարերէն արձանագրութիւններ կան թէ՛ կիսաւեր, թէ՛ կանգուն յուշարձաններուն վրայ: Հին ժամանակաշրջանի ճարտարապետական կտորները եւ ժողովրդական աւանդութիւնները կը հաստատեն, որ այս վայրը հեթանոսական ժամանակներուն եղած է սրբատեղի:

Քրիստոնէական մշակոյթին մէջ, հայ խաչքարային արուեստը ինքնատիպ է: Իսկ պատերու մէջ տեղադրուած (որմնափակ) խաչքարը ինքնատիպ է հայ խաչքարային մշակոյթին մէջ: Մինչեւ այսօր պահպանուած այս իւրայատկութիւններով խաչքարներէն երեքը կարելի է գտնել Բոհ Եղցի վանքին մէջ:

13-րդ դարուն, եկեղեցի շինելու ժամանակ քանդակագործներ յատուկ խաչքարեր կը պատրաստէին, որպէսզի զանոնք օգտագործէին կամ եկեղեցիի ներսի պատերուն մէջ, կամ ալ անոր դուրսի պատերը զարդարելու նպատակով:

Նկատելի է, թէ ինչպէս 13-րդ դարուն կառուցուած են Բոհ Եղցի համալիրի եկեղեցիները: Անոնք ներսի կողմէն եղած են պարզապէս շաղախով ծեփուած՝ բոհ, որ կը նշանակէ անհարթ ու կոպիտ: Ահա թէ ուրկէ կու գայ վանքի անունը: Ներսի անտաշ վիճակին հակադրուած, վանքի դուրսի պատերը հմայիչ են իրենց գեղեցիկ խաչերով, խաչքարերով եւ քանդակագործութիւններով:

Վանքը բաղկացած է չորս եկեղեցիների: Բլուրի գագաթին կայ մատուր եկեղեցին, մէկ միասնական գաւիթ ունեցող երկու եկեղեցիները եւ բլուրի ստորոտի չորրորդ եկեղեցին:



Բոհ Եղցի եկեղեցիներէն մէկը ներսէն դիտուած





ԸՆԶՈՒՂՏ

Ընծուղտը ամենէն բարձրահասակ անասունն է: Անոր վեց մեթրի հասնող հասակին կէսը, իր երկար վիզն է: Ընծուղտներուն մարմինը բաց դեղին է, մուօ շագանակագոյն խալերով: Այդ նախշերը իւրաքանչիւր ընծուղտի մօտ իւրայատուկ են, անկրկնելի ինչպէս մարդու մատնահետքերը: Հետաքրքրական է, թէ ինչպէս նախշերու օգնութեամբ կարելի է որոշել ընծուղտի տարիքը. որքան մուօ են անոնք, այնքան տարիքով աւելի մեծ է ընծուղտը:

Անասուններուն մէջ, ընծուղտը ունի ամենամեծ սիրտը (11 քիլօ) եւ ամենաերկար լեզուն (50 սմ): Ընծուղտին գլուխը փոքր է, ոտքերը երկար, առջեւի ոտքերը աւելի երկար են քան ետեւինները: Ճակատին ունի մաշկապատ եղջիրիկներ: Ընծուղտը արագ վազող կենդանի է եւ ունի սուր տեսողութիւն:

Ընծուղտները փոքրիկ խումբերով կ'ապրին Ափրիկէի սաւաննաներուն մէջ:

Այս բարձրահասակ կենդանին կ'ունենայ մէկ ծագ: Նորածին ընծուղտի ծնունդը կը տօնէ ամբողջ խումբը: Բոլորը կը հաւաքուին փոքրիկին մօտ տեսնելու եւ քնքշօրէն շոյելու զինք:

Վտանգի պարագային ընծուղտները քաջաբար կը պաշտպանեն խումբի բոլոր փոքրիկ ընծուղտները անխտիր:

Մնուելով հիպօեղ բոյսերով, ընծուղտը կը յագեցնէ իր ծարաւը: Ան աւելի երկար կը դիմանայ առանց ջուրի քան ուղտը:

Ընծուղտներու թշնամիներն են առիւծներն ու մարդերը: Տարիներ շարունակ մարդիկ որսացած են զանոնք, օգտագործելով անոնց միսն ու մորթը:

Ո՞Վ Կ'ՈՒԶԷ ԸԼԼԱԼ ԲԱԶՄԱԳԵՏ

Սեպտեմբեր ամսուան հարցումներու պատասխաններուն ժամկէտն է 15 Հոկտեմբեր 2025: Հետեւաբար, սիրելիներ, արձանագրեցէք զանոնք թուղթի մը վրայ, նշելով ձեր անունն ու ձեր յաճախած դպրոցին անունը: Յետոյ ուղարկեցէք այդ թուղթը «Հորիզոն»ի խմբագրատուն՝

3401 Olivar Asselin  
Montréal, Québec  
H4J 1L5

1- Արցախի անկախութիւնը տեղի ունեցաւ...

- ա) 28 Մայիս 1918-ին:
- բ) 2 Սեպտեմբեր 1991-ին:
- գ) 21 Սեպտեմբեր 1991-ին:

2- Ինչպէ՞ս պահած ենք եւ կրնանք պահել մեր ինքնութիւնը:

- ա) Պահելով մեր լեզուն եւ մշակոյթը:
- բ) Պահելով մեր հաւատքն ու մեր ազգային արժէքները:
- գ) Վերոյիշեալ 2 պատասխանները:

3- Հայաստանի երկրորդ անկախութիւնը տեղի ունեցաւ...

- ա) 21 Սեպտեմբեր 1991-ին:
- բ) 28 Մայիս 1918-ին:
- գ) 2 Սեպտեմբեր 1991-ին:

4- Իսկ ի՞նչ կը նշանակէ ազատ ու անկախ պետութիւն:

- ա) Պետութիւն մը, որ ինքնավար է եւ կախեալ չէ ուրիշ պետութենէ մը:
- բ) Պետութիւն մը, որ կախեալ է ուրիշ պետութենէ մը:
- գ) Պետութիւն մը, որ ուրիշ պետութեան գերիշխանութեան տակ է:

5- Արցախի մէջ է, Մեծն Տիգրան զոր քաղաքը կառուցած է:

- ա) Ստեփանակերտ
- բ) Տիգրանակերտ
- գ) Մարտակերտ

6- Մռաւը, Գոմշասարը, Կուսանացը եւ Քիրսը

- ա) Արցախի գետերէն են:
- բ) Հայաստանի լեռներէն են:
- գ) Արցախի լեռներէն են:

7- Մտքերն ու յիշողութիւնները կազմակերպելու եւ նոր տեղեկութիւններ դիւրութեամբ սորվելու համար:

- ա) Քունը անհրաժեշտ է:
- բ) Բջիջայինի օգտագործումը անհրաժեշտ է:
- գ) Համակարգիչի օգտագործումը անհրաժեշտ է:

8- Ո՞ւր կը գտնուի Բոփ Եղցին:

- ա) Արցախի Շուշի քաղաքին մէջ:
- բ) Արցախի Մարտունի շրջանի Հացի գիւղին մէջ:
- գ) Արցախի Հադրութի շրջանի Տող գիւղին մօտ:

9- Ինչո՞ւ Բոփ կոչուած են 4 եկեղեցիները:

- ա) որովհետեւ եկեղեցիներուն ներսի պատերը պարզապէս շաղախով ծեփուած են, չեն ներկուած:
- բ) որպէսզի բռնատէր իշխանութեան մը գերի չիյնան:
- գ) որպէսզի ապահով ու կանգուն մնան:

10- Անասուններուն մէջ, ո՞վ ունի ամենամեծ սիրտը եւ ամենաերկար լեզուն:

- ա) Փիղը:
- բ) Ընծուղտը:
- գ) Կոկորդիլոսը:



Մանկապատանեկան Հորիզոնը կը հովանաւորեն ՀՕՄ-ի Գանատայի շրջանային վարչութիւնը եւ Գանատայի շրջանի իր 10 մասնաճիւղերը

Հեռաձայն (514) 332-3757  
Email: sylvia@horizonweekly.ca  
Խմբագրութիւն՝ Անահիտ Պալեանի  
Ձեւադրացք՝ Լորի Խաչերեանի